ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2023 թվականի N 511 - Ա

«ԽՆԱԾԱԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 226-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված N 2-ով հաստատված կարգի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված նկարագրի 1-ին կետի 7-րդ և 13-րդ ենթակետերով, «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48-րդ կետի 17-րդ ենթակետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 11-ին «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտավազդ Աբրահամյանի գրավոր բացատրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

«Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված և տնօրենին վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «Խնածախի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտավազդ Աբրահամյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023 թ. դեկտեմբերի 15
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290